ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 112-Ա
« 28 » ԱՊՐԻԼԻ 2025Թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով, 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» N878-Ն որոշմամբ հաստատված կարգով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի փորձագետի կողմից իրականացվող աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր

Հավելված՝
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2025 թվականի ապրիլի 28 -ի
թիվ 112 - Ա որոշման

Ծրագիր
փորձագետի ներգրավման և իրականացվող աշխատանքների

Հիմք ընդունելով 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 878-Ն որոշումը՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնում ներգրավել փորձագետ:

1. Հիմնավորումները՝

Պետական մարմնի կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ գործառույթի իրականացման ծավալների կտրուկ ավելացման դեպքով՝

1. Ապահովում է Մարզպետին և Գլխավոր քարտուղարին ՀՀ օրենսդրությամբ տրված լիազորությունների և գործունեության օպերատիվության ու արդյունավետության կազմակերպումը.
2. Ապահովում և իրականացնում է մարզպետի աշխատակազմի, Մարզի համայնքների և մարզպետի աշխատակազմի ենթակայության կազմակերպությունների իրավական աջակցության ցուցաբերման աշխատանքները.
3. Ապահովում է քաղաքացիների և պաշտոնատար անձանց ընդունելության, անհրաժեշտ իրավաբանական խորհրդատվության և համապատասխան տեղեկատվության տրամադրման աշխատանքները.
4. Կազմակերպում է քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից աշխատակազմին հասցեագրված նամակների /դիմումներ, բողոքներ, առաջարկություններ/ քննարկումը և սահմանված ժամկետում դրանց ընթացքի ապահովումը.
5. Ապահովում և իրականացնում է վարչական և կարգապահական խախտումների հետ կապված գործերի վարման աշխատանքները.
6. Ապահովում և իրականացնում է իրավապահ մարմիններից ստացվող նյութերի քննարկման արդյունքների ամփոփման աշխատանքները.
7. Ուսումնասիրում և վերահսկում է մարզպետի աշխատակազմի ենթակայության ընկերությունների ու կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթները և ծագած խնդիրների լուծման վերաբերյալ մարզպետին ներկայացնում համապատասխան առաջարկություններ.
8. իրավական և մասնագիտական հսկողության շրջանակում իրականացնում է հսկողություն Մարզի տեղական ինքնակառավարման մարմիններում, ուսումնասիրում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի օրինականությունը և ծագած խնդիրների լուծման վերաբերյալ ներկայացնում համապատասխան առաջարկություններ.

9. լիազորագրի հիման վրա դատական ատյաններում պաշտպանում է մարզպետի աշխատակազմի շահերը.
10. Ապահովում և իրականացնում է հակակոռուպցիոն միջոցառումների աշխատանքների համակարգումը:

2. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը՝ 1 /մեկ/ տարի:

3. Փորձագետի աշխատավարձը կազմում է՝ 322.816 /երեք հարյուր քսաներկու հազար ութ հարյուր տասնվեց/ ՀՀ դրամ: Փորձագետի հիմնական աշխատավարձը համապատասխանում է քաղաքացիական ծառայողի ղեկավար պաշտոնների 4-րդ ենթախմբին համապատասխանող սանդղակի նվազագույն գործակցի և բազային աշխատավարձի արտադրյալին:

4. Ակնկալվող արդյունքը՝ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի կանոնադրությամբ սահմանված պահանջների արդյունավետ իրականացումը:

5. Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետները՝ յուրաքանչյուր երեք ամիսը մեկ:

6. **Աշխատանքների գնահատման չափանիշները՝** օրենքով սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպել մարզպետի աշխատակազմի, մարզային ենթակայության կազմակերպությունների, բաժնետիրական ընկերությունների, համայնքների գործունեության իրավական գործընթացի կազմակերպումը օրենսդրությանը համապատասխան: Աշխատանքը գնահատվում է ըստ փուլերի՝ երեք ամիսը մեկ և ամփոփիչ փուլ: Աշխատանքը գնահատվում է երեք ամիսը մեկ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել: Կատարած աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

7. Փորձագետին ներկայացվող պահանջները՝ փորձագետը պետք է ունենա

1) Կրթություն, որակավորման աստիճանը

Ուղղություն՝ Գործարարություն, վարչարարություն և իրավունք

1. Ոլորտ՝ իրավունք
2. Ենթաոլորտ՝ իրավունք
3. Մասնագիտություն՝ (042101.00.6) իրավագիտություն կամ (042101.00.7) իրավագիտություն

2) Աշխատանքային ստաժը, աշխատանքի բագավառում փորձը՝

Չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի բնագավառի չորս տարվա աշխատանքային փորձ.

3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
4) գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

2025-04-28 15:52:51 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ